

ՎՃԱՐԱՅԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վերջին տարիներին տեղ գտած ճգնաժամային երևույթները դեռևս շարունակում են պահպանել համաշխարհային տնտեսությունում անկայունություն ստեղծող գործոնները, իսկ կիրառված տնտեսական քաղաքականության գործիքները սպասված արդյունքներ չեն ապահովում: Մասնավորապես՝ ներկայումս միջազգային շուկաներում տեղ գտնող ֆինանսական ակտիվների գների անկանոն տատանումները, երկրների կենտրոնական բանկերի կողմից կիրառվող կարգավորման հայեցողական մոտեցումները (բանկային հաշիվների սառեցում, արգելանքների կիրառում) խորացնում են անվտանգությունը երկրում շրջանառվող վճարային գործիքների նկատմամբ: Մինչդեռ բանկային համակարգի ձևավորման գործում էական և վճռորոշ նշանակություն է ունեցել հենց վճարային գործիքների զարգացման ընթացքը:

Շատ մասնագետների դիտարկմամբ բանկերը ծագել են հենց առևտրական հարաբերություններում մասնավոր վճարային գործիքների զարգացման արդյունքում: Այսինքն, բանկերի նախատիպերը հենց այն անձանց գործունեության տեսակն է, որոնք մասնագիտացած էին մասնավոր վճարային գործիքների շրջանառության կազմակերպմամբ: Արդյունքում XVI-XVII դարերում, առևտրական գիլդաները մի շարք քաղաքներում (Վենետիկ, Հենույի, Միլան, Ամստերդամ, Համբուրգ, Նյուրնբերգ) ստեղծեցին մասնագիտացված Ժիրոբանկեր, հաճախորդ-վաճառող առևտրական հարաբերություններում անկանխիկ հաշվարկներ իրականացնելու նպատակով: Ուշագրավ է այն փաստը, որ այդ հաշվարկներն իրականացվում էին հատուկ դրամական միավորներով, որոնք արտահայտվում էին դրանցում պարունակող թանկարժեք մետաղների որոշակի կշիռներով, իսկ ազատ դրամական միջոցները տրամադրում էին պետությանը, քաղաքներին և արտոնություններ ունեցող արտաքին առևտրով զբաղվող խոշոր ընկերություններին¹:

Անգլիայում, օրինակ՝ բանկային համակարգը ձևավորվել է տասնվեցերորդ դարի կեսերին, ընդ որում առաջին բանկիրները կամ ոսկերիչներ էին կամ առևտրականներ: Առաջին բաժնետիրական բանկն Անգլիայում հիմնադրվեց 1694 թվականին և ստացավ «Չայլդ» անվանումը: Այս բանկը վարկավորում էր նաև Անգլիայի կառավարությանը, երբ պետությունը ֆինանսական միջոցների համալրման խիստ կարիք էր ունենում, սրանով էլ պայմանավորված այս բանկը կառավարության կողմից ստացավ փողի էմիսիա կատարելու մենաշնորհ, որոնք պարտադիր ընդունվում էին բոլոր վճարումների ժամանակ: Բացի դրանից, այն վերանվանվեց որպես Անգլիայի բանկ և ստացավ պետական փոխառությունների տեղաբաշխման իրավունք, ինչի արդյունքում էլ, առաջին անգամ աշխարհում ձևավորվեց բանկերի կողմից պետական պարտքի կառավարման համակարգը: 1844 թվականին Ռ.Պիլի ակտով, արդեն օրենսդրությամբ հաստատվեց Անգլիայի բանկի փողի էմիսիայի մենաշնորհը: Դրանով իսկ նախկինում շրջանառվող մասնավոր փողերը փոխվեցին նոր փողերով, որոնք 100 տոկոսով ապահովված էին ոսկով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1946թ.-ին Անգլիայի բանկը ազգայնացվեց և բացի փողի էմիսիայից, օրենսդրորեն նրան վերապահվեց նաև բանկերի նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունք: Այսպիսով, առաջին անգամ աշխարհում ձևավորվեց կենտրոնական բանկ և առևտրային բանկեր երկմակարդակ բանկային համակարգը:

Ավելին, ԱՄՆ-ում 1836-1866 թթ. բնորոշվում է որպես «Ազատ բանկային դարաշրջան» (Free Banking Era), իսկ փող թողարկող կազմակերպությունները ստացան «ոիսկային բանկեր» (wildcat banks) անվանումը²: Հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ում շրջանառության մեջ էր դրված տարբեր մասնավոր էմիտենտների՝ նահանգների, մունիցիպալիտետների, մասնավոր բանկերի, խանութների, ռեստորանների, եկեղեցիների, երկաթուղիների և նույնիսկ առանձին անհատների կողմից թողարկված շուրջ 8000 տարբեր մասնավոր փողեր:

Սակայն նախորդ դարի կեսերից սրվեցին շուկայական գների անկայունության երևույթ-

¹ Под редакций проф. чл.-корр. РАЕН Е.Ф. Жукова, Банки и банковские операции, М.,Банки и биржи. ЮНИТИ, 1997. Ст. 6.

² <http://www.mirprognozov.ru/prognosis/economics/bitcoin-russia/>, 09 февраля 2016, 18:16

ները, որն արդյունք էր տնտեսությունում տեղ գտնող այնպիսի գործընթացների, ինչպիսիք էին՝

- ահագնացող գնաձային երևույթները, որոնք ցնցեցին ֆինանսական շուկաները,
- միջազգային պայմանագրերի և ավանդական ֆինանսական ինստիտուտների փլուզումը,
- շուկաների զլուխալիզացիան,
- մի շարք նոր զարգացող երկրների արագ ինդուստրացումը,
- տեղեկատվական հոսքերի արագ ստացումը, դրանց մշակումն ու կյանքի կոչումը:

Իրավիճակն ավելի սրվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագրի փլուզումից հետո: Ինֆլյացիոն վերը նշված գործընթացները շուկայում կարգավորելու նպատակով 1944 թվականի հուլիսին Բրետոն-Վուդս կղզում (ԱՄՆ), արժութային և ֆինանսական հարցերի կարգավորմանը նվիրված կոնֆերանսում, կնքվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագիրը, որին մասնակցում էին ՄԱԿԻ 44 անդամ երկրներ: Կոնֆերանսի առանցքային հարցերից էր «Միջազգային արժութի հիմնադրումը» և «Միջազգային զարգացման բանկի ստեղծումը», ինչպես նաև միջազգային արժութային համակարգի ներդնումը: Համակարգի հիմքում դրված էր դոլարի, որպես առաջատար արժութի ընդունման սկզբունքները, համաձայն որի դոլարի պարիտետը կազմում էր 35 դոլար մեկ ունցիա մաքուր ոսկու նկատմամբ, մնացած երկրների արժութային պարիտետը ընդունվում էր դոլարով: Մտցվեց կոշտ արժութային փոխարժեքների կիրառման և արժութային շուկայի կարգավորման քաղաքականություն, այսինքն՝ սահմանվեց արժութային փոխարժեքների տատանումների սահմանային թույլատրելի շեղումներ, երբ նկատվում էր սահմանային թույլատրելի չափերից ավելի շատ շեղումներ որևէ արժութի համար, ապա տվյալ երկրի կենտրոնական բանկը, անմիջապես ինտերվենցիա էր անում շուկայում այդ արժութից, մինչ այդ փոխարժեքի թույլատրելի սահմանների հասնելը: Համաձայնագիրն ուժի մեջ մտավ 1945թ.-ին: Համաձայնագրին միացան միայն 35 պետություններ, այսինքն՝ կոնֆերանսին մասնակցած երկրների 65 տոկոսը:

Սակայն 1971-73 թթ., վերը նշված հանգամանքների ճնշման տակ, ԱՄՆ-ը փոխեց իր քաղաքականությունը և անցավ լողացող փոխարժեքի կիրառմանը: Դրանով վերջ դրվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագրի գործունեությանը, որով էլ վերջ դրվեց ֆիքսված փոխարժեքների կիրառումը որպես միջազգային արժութային շուկաների կարգավորող գործիքի, այսինքն՝ դրանով վերջ դրվեց նաև դոլարի շրջանառությանը որպես ոսկի: Այդ ժամանակվանից սկսած աշխարհի բոլոր փողերը դարձան ֆուդիցիկացված փողեր, այսպես կոչված «վստահության փողեր» կամ «ֆիատային փողեր»:

Այս պայմաններում փողի տեսությամբ զբաղվող աշխարհի առաջատար մասնագետները, մասնավորապես՝ Բ. Կլայմոնը 1974 թվականին¹ և Ֆ. Հայեկը 1975 թվականին², գրեթե միաժամանակ, բայց իրարից անկախ, նորից առաջ քաշեցին փողի ապագայնացման, այսինքն՝ պետությանը փողի էմիսիայի մենաշնորհից և բանկային համակարգի վերահսկողությունից զրկելու տեսակետը:

Հարկ է նշել, որ այդ մոտեցումը սկզբում միանշանակ չընդունվեց ոլորտի մասնագետների կողմից, սակայն այն առավել շրջադարձային զարգացում գտավ, երբ 1986 թվականին այս տեսակետին միացավ նաև փողի տեսությամբ զբաղվող աշխարհահռչակ տնտեսագետ, նոբելյան մրցանակակիր Միլտոն Ֆրիդմանը: Նա ոչ միայն փոխեց իր նախկին տեսակետը, այլև միացավ այն հեղինակների դիրքորոշմանը, ովքեր ոչ միայն ընդունում, այլ նաև հիմնավորում էին մասնավոր փողերի ներդրման արդյունավետությունը, դիտարկելով այն որպես արժութի կայունություն ապահովող իրական հնարավորություն³:

Ըստ էության, հեղինակներն առաջ էին քաշում փողի շուկայի ձևավորման և դրա կայունության ապահովման սկզբունքորեն նոր համակարգ, համաձայն որի փողը դիտվում էր որպես սովորական ապրանք, որն արտադրվում է շուկայական եղանակով, հետևաբար դրա արտադրողներն էլ պետք է լինեն շուկայի մասնակիցները, իսկ դրա իրացումն էլ պետք է կազմակերպվի շուկայական մրցակցության կանոնների համապատասխան: Այսինքն՝ շուկայական մրցակցության արդյունքում պետք է ձևավորվի փողի գինը համապատասխան սպառողական արժեքի

¹ Klein B., 1974, The Competitive Supply of Money, Journal of Money, Credit, and Banking 6,423-453.

² Denationalization of Money -- IEA, 1976 .First published by the Institute of Economic Affairs, London, October 1976

³ Milton Friedman, Anna J. Schwartz, Has Government Any Role in Money? Chapter in NBER book Money in Historical Perspective (1987), Anna J. Schwartz (p. 289 - 314) Published in 1987 by University of Chicago Press

© 1987 by the National Bureau of Economic Research www.nber.org/chapters/c7507

հատկանիշներով, մտնելով շուկայական մրցակցության մեջ անորակ փողերը դուրս կմնան շրջանառությունից և կմնան միայն այն փողերը, որոնք լավագույնն են բավարարում փողի ֆունկցիոնալ հատկանիշներին և պահանջներին, հետևաբար տնտեսությունն էլ կլինի համեմատաբար կանխատեսելի:

Բնականաբար, այս տեսակետը սկզբնական շրջանում լայն տարածում չգտավ, քանի որ արժույթային շուկայում շրջանառվում էր, արդեն իսկ, յուրաքանչյուր երկրի կենտրոնական բանկի կողմից թողարկված ազգային արժույթը, որի փոխարժեքը որոշվում էր սինդիկացված դոլարով: Սակայն վերջին ֆինանսական ճգնաժամից հետո ձևավորված ներկա մակրոտնտեսական անկայուն միջավայրը, աշխարհաքաղաքական անորոշ զարգացումները, ֆինանսական շուկաների կարգավորողների կողմից կիրառվող հայեցակարգային և խստացված վերահսկողական մեխանիզմների կիրառումը փոխեցին իրավիճակը: Հատկանշական է, որ նույն ԱՄՆ-ում 2009 թվականին մի շարք քաղաքներում արդեն իսկ սկսեցին տպել իրենց սեփական արժույթը, որը շրջանառվում էր անկախ Ֆեդերալ պահուստային բանկային համակարգից: Չնայած այն հանգամանքին, որ մասնավոր փողերի թողարկումը շատ երկրներում ընդհանրապես օրենքով արգելվում է, որոշներում էլ թույլատրվում է, բայց դրանց շրջանառության նկատմամբ, ի տարբերություն ազգային արժույթի, կիրառվում են տարբեր հարկման ռեժիմներ՝ հիմնականում ավելացված արժեքով հարկման: Սակայն, այդուհանդերձ դրանք ներկայումս բուռն զարգացում են գտնում ամբողջ աշխարհում, էլեկտրոնային կամ վիրտուալ փողերի տեսքով, ինչին մեծապես նպաստում է զարգացող հզոր ինտերնետային կապի առկայությունը: Արդեն իսկ համաշխարհային արժույթային շուկայում շրջանառվում են շուրջ հազարավոր այդպիսի տարբեր փողեր, և դրանց թիվը դեռևս նվազման միտում չի արձանագրում: Ըստ դրանց տիպերի և թողարկողների կարելի է առանձնացնել երեք հիմնական խմբեր՝

- առևտրային բանկերի կողմից թողարկվող մասնավոր փողեր,
- իրավաբանական անձ հանդիսացող առանձին կազմակերպությունների կողմից թողարկվող մասնավոր փողեր,
- կրեպատվայրուտաներ:

Առաջին խմբում ընդգրկված են հիմնականում՝ ազատ բանկային մրցակցության ոլորտում գործող, առևտրային բանկերի կողմից թողարկվող փողերը: Այդպիսի թողարկումը, փաստորեն, բացառում է փողի թողարկման մենաշնորհը կենտրոնական բանկերի կողմից, իսկ փողի զանգվածը ենթադրում է կարգավորման շուկայական գործիքներ, փողի սահմանափակ ապահովվածություն ստեղծող պահուստներով: Ընդ որում, փողի ապահովվածություն ստեղծող պահուստները այս դեպքում ձևավորվում են ինչպես ապրանքներով, այնպես էլ ֆիատային փողերով (վստահության փողերով):

Երկրորդ խմբում ներառված են, անբարենպաստ պայմաններում հայտնված կազմակերպությունների կողմից թողարկվող փողերը, որոնք թողարկվում են կտրոնների, սերտիֆիկատների ձևով սեփական արտադրանքի ձեռքբերման պայմանով, դրանց միջոցով, օրինակ, կարելի է վճարել աշխատավարձ, որոնք կարող են շրջանառվել որոշակի սահմանափակ խմբի կողմից և կատարել լիարժեք վճարամիջոցի գործառնությունը, ինչպես փողը:

Երրորդ խմբում ներառված են ամենահեռանկարային զարգացման միտումներ դրսևորող փողերը, կրիպտոպայրուտաները կամ վերտուալ փողերը: Աշխարհում առաջին այդպիսի փողը շրջանառության մեջ մտավ Բիտքոինների (Bitcoin) ձևով, որի հիման վրա ներկայումս շրջանառվում են արդեն հազարավոր տարատեսակ այդպիսի փողեր: Ըստ էության սա ցանցային համակարգ է, որի միջոցով կարելի է կատարել ցանկացած գործարք, ոչ միայն ապրանքային շուկաներում, այլ նաև ֆինանսական շուկաներում և նույնիսկ ֆոնդային բորսաներում: Ի տարբերություն իրական փողերի, սրանցից յուրաքանչյուրը չեն կրկնում մյուսներին և ունեն իրենց ուրույն հատկանիշները, ինչը բարձրացնում է դրանց պաշտպանվածությունը և բացառում է դրանց կրկնօրինակումը կամ զեղծարարությունը:

Ներկայումս շատ մասնագետների և երկրների կողմից ընդունվում է, որ մասնավոր փողերի կիրառման հեռանկարային զարգացումները նույնքան կարևոր են, որքան շուկայական համակարգի հետագա զարգացման նպատակահարմարությունն ընդհանրապես:¹

¹ 2015 [s://bits.media/chto-takoe-bitcoin/](https://bits.media/chto-takoe-bitcoin/)

ՎՃԱՐԱՅԱԾՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԹԱՄԱՐԱ ՍԻՐԱԿԱՆԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ,*
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսաժաշկային ամբիոն

Համառոտագիր

Վերջին տարիներին երկրների կենտրոնական բանկերի կողմից կիրառվող կարգավորման հայեցողական մոտեցումները (բանկային հաշիվների սառեցում, արգելանքների կիրառում) խորացնում են անվստահությունը երկրում շրջանառվող վճարային գործիքների նկատմամբ, ամուր հենք ստեղծելով այլընտրանքային վճարային գործիքների ստեղծման համար: Հոդվածում քննարկված են միջազգային վճարաժաշկային համակարգում տեղ գտնող ժամանակակից զարգացումները, ուսումնասիրված են, բուռն թափով զարգացող այլընտրանքային վճարային գործիքների առաջացման տնտեսական հիմքերը և դրանց կիրառման հեռանկարները աշխարհի տարբեր երկրներում:

Բանալի բառեր. *վճարային գործիքներ, մասնավոր վճարային գործիքներ, ազատ բանկային համակարգ, ռիսկային բանկեր, սինդիկացված դոլար, ֆիատային փող, էլեկտրոնային փող, վիրտուալ փող, կրեպտովալյուտա:*

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПЛАТЕЖНО - РАСЧЕТНОЙ СИСТЕМЫ

ТАМАРА СИРАКАНОВНА ОВАКИМЯН, *к.э.н., доцент*
Ереванского государственного университета

Аннотация

В последние годы дискреционные регуляторные подходы, применяемые центральными банками стран (замораживание банковских счетов, запреты на счета), углубляют недоверие к обратимым в стране платежным инструментам, создавая прочную основу для внедрения альтернативных платежных инструментов. В статье рассматриваются современные тенденции развития международной платежно-расчетной системы, экономические основы возникновения бурно развивающихся альтернативных платежных инструментов и перспективы их применения в разных странах мира.

Ключевые слова. *платежные документы, частные платежные инструменты, свободная банковская система, рискованные банки, синдицированный доллар, декретные деньги, электронные деньги, виртуальные деньги, криптовалюта.*

MODERN TRENDS OF DEVELOPMENT OF THE PAYMENT AND SETTLEMENT SYSTEM

TAMARA SIRAKAN HOVAKIMYAN, *Ph.D. in Economics, Associate Professor,*
Associate Professor, Yerevan State University

Abstract

In recent years, discretionary regulatory approaches applied by central banks in countries (freezing of the bank accounts, bans on accounts), deepen distrust with respect to the reversible payment instruments of the country, creating a solid basis for the introduction of alternative payment instruments. The article examines the current trends in development of the international payment and settlement system, the economic foundations for the emergence of rapidly developing alternative payment instruments and the prospects for their application in different countries of the world.

Keywords: *Payment documents, private payment instruments, free banking system, risky banks, syndicated dollar, fiat money, electronic money, virtual money, crypto currency*